

## **ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ՎԱՐԴՈՒԾ ՆՈՐԱՅՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ՀԱՄԱՊՐԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԲԱՅԵՐԻ  
ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՖՐԱՆՍԵՐԵՆՈՒՄ**

**Ժ. 02.08 - «ՈՒՄԱՆԱԿԱՆ լԵԳՈՒՆԵՐ» մասնագիտությամբ  
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական  
աստիճանի հայցման ատենախոսության**

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ - 2014**

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի Վ. Բիյուտովի անվան պետական լեզվաբանական համալսարանում:

Գիտական դեկավար՝

բանասիրական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր  
Ա. Վ. Բարլեզիօյան

Պաշտոնական  
ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր  
Վ. Գ. Համբարձումյան

Առաջատար  
կազմակերպություն՝

Հայ-ռուսական (Սլավոնական)  
համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2014թ. հունիսի 27-ին, ժամը 12:30-ին ՀՀ ԲՈՆ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող 009 «Օտար լեզուներ» մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ Երևան, Ալեք Սահմուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014թ. մայիսի 26-ին:

Մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար,  
բ.գ.դ., պրոֆեսոր՝

Տ. Դիլիյան

Ե. Լ. Երգնակյան

Վերլուծականությունը բնորոշ է ֆրանսերենին և նկատելի նրա տարրեր մակարդակներում: Սակայն փաստն ավելի հաճախ արձանագրվում է քերականական համակարգի տվյալներով, ինչն ամբողջական պատկերացում չի տալիս լեզվական այս կարևոր երևույթի նասին, որն ընդգծված կերպով դրսնորվում է նաև ֆրանսերենի բառապաշտրում:

Վերլուծական բառամիավորները գործածվում են ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր խոսքի տարրեր ոճերում: Ուստի դրանց ուսումնասիրությունն արժանի է լուրջ ուշադրության, մանավանդ, եթե հաշվի առնենք հետևյալ հանգամանքները.

1. Սույն դասի բառամիավորների բազմաքանակ և գործածական լինելը,

2. Դրանց բացառիկ դերը ֆրանսերենով լիարժեք հաղորդակցվելու համար, քանզի՝

ա) բազմաթիվ հասկացություններ արտահայտվում են միայն վերլուծական բառերով, որոնք տվյալ դեպքում անվանողական արժեք ունեն,

բ) զգալի թվով ամբողջակազմ բառեր ժամանակակից ֆրանսերենում պարբերաբար փոխարինվում են համարժեք վերլուծական կազմություններով, և կամ զուգահեռ ձևերից նախապատվությունը տրվում է վերլուծականին:

Ֆրանսերենի վերլուծական բայերի առաջացմանն անդրադարձել է դեռևս Ֆ. Բրյունոն<sup>1</sup>: Ֆրանսերենի հնագույն հուշարձանի՝ «Ստրաբուրգում երդումներ»-ի տեքստը համեմատելով նրա միջին և արդի ֆրանսերենով կատարված թարգմանությունների հետ՝ Ֆ. Բրյունոն արձանագրում է, որ մի շարք վերլուծական բառեր, որոնք տեղ են գտել ժամանակակից տեքստում, բացակայում են ինչպես բնագրում, այնպես էլ միջին ֆրանսերենով շարադրանքում: Բացի դրանից, ֆրանսերենի պատմությանը նվիրված իր մեծածավալ աշխատության մեջ Ֆ. Բրյունոն նշում է բազմաթիվ ամբողջակազմ բառերի՝ վերլուծական բառամիավորներով փոխարինվելու դեպքը<sup>2</sup>.

*Acreire – faire crédit, prendre à crédit*

*Affoler – mettre en mauvais état*

*Aisier – se mettre à l'aise*

*Angoissement – avec angoisse*

*Après – auprès de, և այլն:*

<sup>1</sup> Brunot F. La pensée et la langue. Paris: Masson, 1965.

<sup>2</sup> Brunot F. Histoire de la langue française. V. 1, Paris, 1905, p. 144.

Լեզվաբաներից ոմանք<sup>3</sup> բառապաշարային վերլուծական միավորների գործածությունը բացատրում են համադրական բառակազմության, մասնավորապես բառածանցման բնագավառում արդի ֆրանսերենի ունեցած միջոցների ու հնարավորությունների հարաբերական աղքատությամբ, որն այսօր ընդունելի չէ, քանի որ բառածանցումը ժամանակակից ֆրանսերենում բառակազմության միանգանայն արդյունավետ միջոց է՝ մասնավորապես գիտական եզրարանության մեջ և մանուկում։ Ավելի կարևոր ենք համարում այն, որ համադրական (անբողջակազմ) բայերի մեջ մասը բազմիմաստ է, հաճախ պատճառաբանված չէ և երբեմն ունի համանուններ։ Ահա այն հիմնական դրդապատճառները, որոնք խթանում են վերլուծական բայերի ի հայտ գալը, որոնց մեծագույն մասը մենիմաստ է, պատճառաբանված և չունի համանուններ։

Աստենախսության օբյեկտը ժամանակակից ֆրանսերենի բառախմաստային համակարգն է, իսկ առարկան՝ ժամանակակից ֆրանսերենի վերլուծական բայերն ու նրանց համակարգային փոխառնչությունները համադրական բայերի հետ։

Թեմայի արդիականությունը պայմանավորված է վերլուծական բայերի՝ հատկապես համադրական բայերի հետ զուգադրման անհրաժեշտությամբ, որի ընթացքում և ապա նաև արդյունքում ի հայտ են գալիս իմաստառնական և քերականական մի շարք առանձնահատկություններ, որոնք մանրազնին հետազոտության և լրացումների կարիք ունեն որպես ժամանակակից ֆրանսերենի դեպի վերլուծական կառույցներն ունեցած բացահայտ միտումների ամենաակներև դրսևորումներից մեկի, մասնավորապես համադրական բայերի հետ վերջիններիս համակարգային փոխառնչությունների վերհանման առումով, ինչը բավարար չափով և համակողմանի ընդգրկումով լուսաբանված չէ լեզվաբանական գրականության մեջ։

Աշխատանքի գիտական նորույթն այն է, որ առաջին անգամ փորձ է արվում ի մի բերել և հետազոտել ժամանակակից ֆրանսերենի վերլուծական բայերը։ Խոսքային հաղորդակցնան ոլորտում կարևոր դեր կատարող այս բայերը մինչ այժմ հանգամանորեն չեն ուսումնասիրվել ժամանակակից բառագիտության և քերականության լույսի ներքո։

<sup>3</sup> Bally Ch. Linguistique générale et linguistique française. Paris: P.U.F., 1944; Marouzeau J. Les déficiences de la dérivation française. Paris, 1951; Bröndal V. Le français, langue abstraite. Copenhague, 1936.

Աշխատանքի նպատակն է համապարփակ վերլուծության ենթարկել ֆրանսերենի վերլուծական բայերը, կատարել համադրական և վերլուծական բայերի գուգադրական վերլուծություն և բացահայտել նրանց միջև առկա տարրերությունները:

Սույն նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

- բացահայտել վերլուծական բառամիավորների գոյության և տարածման նախադրյալները,
- գուգադրական վերլուծության ենթարկել վերլուծական բառը և բառապաշտարային հարակից միավորները (դարձվածք, բարդ բառ, ազատ բառակապակցություն, ասացվածք, առածք),
- Վեր հանել վերլուծական բային բնորոշ գծերն ու առանձնահատկությունները,
- դասակարգել ֆրանսերենի վերլուծական բայերն ըստ իմաստաբանական խմբերի,
- ուսումնասիրել *avoir, être, faire, mettre* լայնիմաստ սպասարկով բայերով կազմված վերլուծական բայերը,
- քննության առնել որոշակիչների դերը վերլուծական բայերում,
- կատարել համադրական և վերլուծական բայերի իմաստառձական ու քերականական (նամապարագես կերպային) գուգադրական հետազոտություն:

Առաջարված խնդիրների լուծման համար դիմել ենք ուսումնասիրության հետևյալ **մեթոդներին՝**

- լեզվաբանական գրականության և գեղարվեստական տեքստերի քննական ուսումնասիրություն,
- բառարանային սահմանումների վերլուծություն,
- համատեքստային և լեզվաօճական հետազոտություն,
- լեզվամիավորների բաղադրիչային վերլուծություն:

Աշխատանքի տեսական նշանակությունը հայ և օտարազգի գիտնականների աշխատությունների քննական վերլուծությունն է, արծարներով խնդիրների ծզգրումը և սեփական տեսակետների շարադրումը, իսկ գործնական արժեքը՝ ֆրանսերենի վերլուծական բայերի համակողմանի ուսումնասիրությունը, գուգադրումը համադրական բայերի հետ և ստացված արդյունքների ամփոփումը, որոնք կարող են տեղ գտնել բառագիտության և քերականության դասընթացներում ու դասախոսություններում, ինչպես նաև ֆրանսերենի նոր բառարանների և բառացանկերի ստեղծման աշխատանքներում:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, գիտական և գեղարվեստական գրականության, բառարանների, մամուլի և համացանցային աղբյուրների ցանկերից, ինչպես նաև հավելվածից:

**Ներածության** մեջ ներկայացվում են աշխատանքի թեման, արդիականությունն ու գիտական նորույթը, ուսումնասիրության նպատակն ու առաջ քաշված խնդիրները, ինչպես նաև տեսական ու գործնական արժեքը:

Ատենախոսության **առաջին գլուխը**, որ վերնագրված է «Վերլուծական բառի և բառապաշտրային հարակից միավորների հարաբերակցության խնդիրը», բաղկացած է չորս ենթագլխից և նվիրված է վերլուծական բառի և բառապաշտրային հարակից միավորների (դարձվածք, բարդ բառ, ազգային բառակապակցություն, ասացվածք, առաջ) վերլուծությանը, ինչի արդյունքում բացահայտվում են նրանց միջև առկա ընդհանրություններն ու տարբերությունները, որոնց հիման վրա տրվում է վերլուծական բառի մեր սահմանումը:

Վերլուծական բառը և դարձվածքն ունեն ընդհանուր հատկանիշներ, որոնցից հարկ ենք համարում նշել հետևյալները.

1. Վերլուծական բառի, ինչպես նաև դարձվածքի բաղադրիչները սոսկ հնչյունափես են նման առանձին բառերին, սակայն ինքնուրույն բառի արժեք չունեն, այսինքն՝ ինաստակիր լեզվական միավորներ են, որոնք հնարավոր չեն ինաստային տարրալուծման (մասնատման) ենթարկել: Այսպես, *porter bonheur* վերլուծական բայում *porter* բայց ինաստաբանորեն լիինաստ չէ, այլ կիսասպասարկու, և միայն *bonheur* բաղադրիչի շնորհիվ է, որ ստեղծվում է բառակապակցության պատկերը, որը գործառական-ինաստային առումով համարժեք է ամբողջակազմ բառին: Նմանափես *avoir un poil dans la main /քառացի՝ ծեռքի մեջ մազ ունենալ/* – մատող մատին չխփել /ծովյալ, ալարկոտ լինել/ դարձվածքի ինաստը չի առաջացել նրա բաղադրիչների ինաստների գումարից:

2. Վերլուծական բառերը դարձվածքների նման նախադասության անդամների դեր են կատարում՝ համարժեք լինելով գոյականին (*Վերլուծական գոյական՝ la mise en œuvre, la prise en charge – դարձվածք՝ le talon d'Achille, la pomme de discorde և այլն*), ածականին (*Վերլուծական ածական՝ au courant, à la mode – դարձվածք՝ gras à lard, tête sans cervelle և այլն*), բային (*Վերլուծական բայ՝ faire attention, avoir envie, mettre au monde – դարձվածք՝ ménager la chèvre et le chou, tourner autour du pot, vouer aux gémotries և այլն*), մակրային (*Վերլուծական մակրայ՝ à bon marché, de bonne heure – դարձվածք՝ à la baguette, à bannière levée*) և այլն:

**3. Վերլուծական բառերի և դարձվածքների մեջ նասը սովորաբար ունի կայուն ձև: Օրինակ՝ վերլուծական բայ՝ faire défaut, mettre en œuvre, prendre soin – բայական դարձվածք՝ opiner du bonnet, casser sa pipe, être dans les bras de Morphée և այլն:**

Սակայն առանձին բառերի նման վերլուծական բառերը և դարձվածքները ևս կարող են ունենալ իրենց տարբերակները: Օրինակ՝ վերլուծական բայ՝ faire effort/un effort/des efforts, faire reproche/un reproche/des reproches – բայական դարձվածք՝ porter la culotte/les culottes, marcher sur/dans les plates-bandes de quelqu'un և այլն:

**4. Վերլուծական բառերը և դարձվածքներն ունեն իրենց բովանդակությունը, բացարկում են, իսկ որոշ վերլուծական բառեր և դարձվածքներ էլ բառային համարժեք ունեն և կարող են փոխարինվել համանակ բառով կամ բառերով: Օրինակ՝ վերլուծական բայ՝ avoir lieu – se produire, donner le signal – annoncer, prendre en chasse – poursuivre – բայական դարձվածք՝ tailler une bavette – bavarder, passer au bleu – dissiper, battre la chamade – s'affoler, և այլն:**

**5. Առանձին բառերի նման վերլուծական բառերը և դարձվածքները ևս կարող են լինել մենիմաստ և բազմիմաստ:**

Նշենք ֆրանսերենի բազմիմաստ վերլուծական բայերի մի քանի օրինակ.

**Prendre parti** – 1. որոշակի դիրք գրադեցնել, 2. կողմ կամ դեմ լինել, որևէ մեկին կողմ կամ դեմ հանդես գալ, արտահայտվել:

**Faire face** – 1. ինչ-որ բանի դիմացը գտնվել, 2. ինչ-որ մեկին դեմադրեմ հայտնվել, ինչ-որ մեկի աչքերի մեջ նայել, 3. դիմադրություն ցույց տալ, պայքարել, չգիշել, 4. պահանջները բավարարել՝ կատարել, վճարել:

Նշենք ֆրանսերենի բազմիմաստ դարձվածքների մի քանի օրինակ.

**Passer comme une lettre à la poste** – 1. դյուրամարս լինել, 2. հաջողության հասնել (*առանց որևէ խոչընդոտության*):

**Faire le saut ou franchir le saut** – 1. որոշում ընդունել (*անտեսելով և դժվարությունները, և վտանգը*), 2. չպայքարել, հանձնվել, զիջել, ընկրկել, 3. իրեն թույլ տալ իրապուրել (*գործածկում է երիտասարդ աղջկա կամ կնոջ մասին խոսելիս*):

**6. Դարձվածքների բազմիմաստության երևույթին է առնչվում նաև դարձվածային համանությունը, որն ի դեպ քիչ է հանդիպում: Երբեմն**

Դրանք նույնիսկ իրարից չեն տարբերում<sup>4</sup>: Դարձվածքների բազմիմաստությունը երբեմն կարող է հանգեցնել համանունության: Այս դեպքում դարձվածքի նախկին և նոր իմաստները (ինչպես և առանձին բառերի դեպքում է) այնքան են հեռանում իրարից, որ այլև չեն կապվուն նույն դարձվածքի հետ և դիտվում են իրեւ համանուն դարձվածքներ: Նշենք ֆրանսերենի համանուն դարձվածքների մի քանի օրինակ:

**Avoir son compte** – ամբողջովին հարքած լինել:

**Avoir son compte** – նահացու հարված ստանալ:

**Donner de la tablature à quelqu'un** – նեղություն, ցավ, հոգս պատճառել:

**Donner de la tablature à quelqu'un** – ծառայել (որպես նմուշ, օրինակ), և այլն:

Դամանուններ կարելի է գտնել նաև վերլուծական բայերում: Օրինակ՝ *avoir raison* «իրավացի լինել» և *avoir raison* «մեկին հաղթել»:

7. Վերլուծական բառերի նման շատ դարձվածքներ ևս ունեն հականիշներ, ինչը բոլոր դարձվածային միավորների համար պարտադիր չէ: Այստեղ կարելի է առանձնացնել մի քանի խումբ:

ա) Դականիշներ, որոնք տարբերվուն են բառային կազմով, երբեմն նաև՝ քերականական կառուցվածքով: Օրինակ՝

<b>Վերլուծական բայ</b>	<b>Բայական դարձվածք</b>
Avoir confiance ≠ mettre en doute.	Avoir, tenir la bouche cousue ≠ vendre la mèche.
Avoir hâte ≠ mettre du temps.	Avoir le champ libre, avoir les coudées franches ≠ mettre des bâtons dans les roues, serrer la bride.

բ) Դականիշներ, որոնք ունեն միևնույն բառային կազմը (բաղադրիչը կամ բաղադրիչները), հաճախ նաև՝ միևնույն քերականական կառուցվածքը: Օրինակ՝

<b>Վերլուծական բայ</b>	<b>Բայական դարձվածք</b>
Avoir raison ≠ avoir tort.	Aller crescendo ≠ aller descrescendo.
Avoir chaud ≠ avoir froid.	Gagner du terrain ≠ perdre du terrain.

<sup>4</sup> Lamiroy B., Klein J.-R., Labelle J., Leclère Ch., Meunier A., Rossari C. Les expressions verbales figées de la francophonie /Belgique, France, Québec et Suisse/. Paris: Ophrys, 2010, p. 109.

**8.** Դարձվածքների նման որոշ վերլուծական բառեր էլ կարելի է փոխառել կամ պատճենել ուրիշ լեզուներից: Յենց դա է պատճառը, որ հաճախ դրանք մի շարք լեզուներում ունեն միևնույն ներքին կառուցվածքը: Օրինակ՝

<b>Դարձվածքներ</b>
Tous les chemins mènent à Rome. All roads lead to Rom. Все дороги ведут в Рим. Բոլոր ճանապարհները տանում են Հռոմ:
Jeter des perles aux porceaux. To cast pearls before swine. Метать бисер перед свиньями. Մարգարիտներ շաղ տալ խոզերի առջև:

<b>Վերլուծական բառեր</b>		
<b>ֆրանսերեն</b>	<b>իտալերեն</b>	<b>ռումիներեն</b>
faire abstraction	fare astrazione	a face abstractie
faire feu	fare fuoco	a face foc
faire impression	fare impressione	a face impresie
faire opposition	fare opposizione	a face opozitie

**9.** Ինչպես վերլուծական բառերը, այնպես էլ դարձվածային միավորների մի մասը և նրանց բաղադրիչներն օժտված են քերականական կարգերով (առկայացման, դեմքի, բվի, սերի, կերպի և այլն):

**10.** Վերլուծական բառերը, դարձվածային միավորների պես հազվադեպ են ընդունում շարահյուսական որևէ փոխակերպում:

Վերլուծական բայերի շարահյուսական խնդիրներին անդրադարձել են մի շարք լեզվաբաններ, ինչպիսիք են Պ. Ֆրեյգերը<sup>5</sup>, Ք. Ռորերը<sup>6</sup>, Ժ. Բեռնարը<sup>7</sup>, Մ. Գրոսը<sup>8</sup> և այլք:

Նրանք նշում են սխալ փոխակերպումների բազմաթիվ օրինակներ.

\*Garde (plaisir, froid, fin) a été pris(e)...

\*Le général a donné instruction et ordre définitif.

<sup>5</sup> Fraser B. Idioms within a transformational grammar // *Foundations of Language*, 6-1, 1970, pp. 22-42.

<sup>6</sup> Rohrer Ch. Définition of locutions verbales // *French Review*, 41-3, 1967, p. 359.

<sup>7</sup> Bernard G. Les locutions verbales françaises // *La linguistique*, 10-2, 1974, p. 9.

<sup>8</sup> Gross M. Méthodes en syntaxe. Paris: Hermann, 1975, p. 186.

\*Je n'ai pris que soin de l'affaire.

\*C'est fin que le spectacle a pris.

Դարձվածային միավորի շարահյուսական փոխակերպումների մասին առավել ճանրակրկիտ տեղեկություններ կարելի է գտնել Պ. Գիրոյի աշխատություններում: Նա դարձվածքը սահմանում է որպես «մի քանի բառից բաղկացած արտահայտություն, որը կազմում է շարահյուսական և բառային միասնություն»<sup>9</sup>: Նա դարձվածքին բնորոշ հատկանիշներից առանձնացնում է երեքը:

ա) ձևի և իմաստի միասնություն (unité de forme et de sens),

բ) քերականական կամ բառային նորմայից շեղում (écart de la norme grammaticale ou lexicale),

գ) առանձնահատուկ փոխաբերական իմաստներ (valeurs métaphoriques particulières):

Վերլուծական բառի և դարձվածային միավորի միջև կան նաև որոշ տարբերակիչ հատկանիշներ, որոնցից հարկ ենք համարում առանձնացնել հետևյալները.

1. Վերլուծական բայերը համարդական բայերի պես գործածվում են բոլոր եղանակներով և ժամանակաձևերով: Մինչդեռ բայական դարձվածքների դեպքում հաճախ ի հայտ են գալիս ժամանակաձևերի գործածության սահմանափակումներ: Ժամանակային սահմանափակումներով օժտված են, այսպես կոչված, «զգացական դարձվածքները» (locutions émotionnelles), որոնք «հաճախ գործածվում են եզակի թվի առաջին դեմքով»<sup>10</sup>: Օրինակ՝

J'en mettrai ma main au feu.

J'en ai par-dessus la tête.

2. Դարձվածքների մի մասը, ի տարբերություն վերլուծական բառերի, պատմականորեն հանգում է նախադասություններին, այսինքն՝ առաջացել է նրանցից: Օրինակ՝ *Revenons à nos moutons, Venons-en au fait* և այլն:

Վերլուծական բառին հարակից մեկ այլ կազմություն է բարդ/բաղադրյալ բառը: Այս երկուսի միջև ևս գոյություն ունեն մի շարք

<sup>9</sup> Guiraud P. Les locutions françaises. Que sais-je? Paris: Presses universitaires de France, 1967, p. 5.

<sup>10</sup> Heinz M. Les locutions figurées dans le «Petit Robert». Description critique de leur traitement et propositions de normalisation // *Lexicographica, Series Maior*, 49, KG, Tübingen: Max Niemeyer Verlag GmbH & Co, 1993, p. 40.

տարրերություններ, որոնք քննության են առնվում առաջին գլխի երկրորդ ենթագլխում:

1. Դրանցից ամենացայտունը կառուցվածքային տարրերությունն է. դա վերլուծական միավորի տարակազմ՝ ոչ միաբաղադրիչ լինելն է: Սա նշանակում է, որ վերլուծական բառերը տարանջատ ձևավորվածություն ունեն, մինչդեռ բարդ բառերը (*bonhomme* (*m.*), *chauve-souris* (*f.*), *multiforme* (*adj.*), *polyvalent(e)* (*adj.*), *porter* (*v.*), *maintenir* (*v.*), *auparavant* (*adv.*), *aussitôt* (*adv.*), *puisque* (*conj.*), *quoique* (*conj.*), *depuis* (*prép.*), *parmi* (*prép.*) և այլն) ամբողջակազմ միավորներ են՝ բաղկացած իրենց կազմում ոչ ինքնուրուց ձևույթ-հիմքերից:

2. Բարդ բառի կարևոր հատկանիշներից է նաև նրա բաղադրիչ տարրերի անընդմիջարկելի լինելը, մինչդեռ վերլուծական բառի բաղկացուցիչ տարրերը որոշ դեպքերում կարող են ընդմիջարկվել:

Նշենք գրականությունից քաղաքացի քանի օրինակ.

J'ai un urgent besoin de mettre la main sur le salaud qui me fait porter le chapeau depuis des mois. (Pennac D. Au bonheur des ogres. Paris: Gallimard, 1985, p. 243)

Lui aussi, il aurait bien besoin d'être réconcilié avec «les livres»! (Pennac D. Comme un roman. Paris: Gallimard, 1992, p. 71)

J'avais sauvagement besoin de dormir. (Chraïbi D. Le passé simple. Paris: Denoël, 2009, p. 154)

— ...Monsieur, je n'ai aucun besoin de vos enseignements.

— Non, en effet. Vous avez seulement besoin que je vous rende malade. (Nothomb A. Cosmétique de l'ennemi. Paris: Albin Michel, 2001, p. 31)

Դարակից կազմություններից սահմանագատելու համար առաջին գլխի երրորդ ենթագլխում անդրադառնում է նաև վերլուծական բառի և ազատ բառակապակցության տարրերակիշ հատկանիշներին:

1. Վերլուծական բառն ունի բառային մեկ իմաստ և համարվում է բառակազմական մեկ միավոր, մինչդեռ ազատ բառակապակցությունը միասնական բառինաստից գործ է:

2. Ինչպես հայտնի է, ազատ բառակապակցությունը կազմվում է երկու և ավելի լիիմաստ բառերից: Մինչդեռ վերլուծական բառերը կարող են կազմված լինել ոչ միայն երկու լիիմաստ բառերից, այլև մեկ լիիմաստ և մեկ կամ ավելի սպասարկու բառերից. օրինակ՝ à l'abandon, hors de propos, à l'insu de, au lieu de, au sujet de և այլն:

3. Վերլուծական բառի և դարձվածքի ընդհանրությունները ներկայացնելիս նշել ենք, որ երկուսն էլ իմաստակիր լեզվական միավորներ են, որոնք հնարավոր չեն իմաստային տարրալուծման (մասնաւոման)

Ենթարկել: Մինչդեռ ազատ կապակցության իմաստը գոյանում է նրա բաղադրիչների իմաստներից:

Առաջին գլուխ վերջին՝ չորրորդ ենթագլուխը ներկայացնում է վերլուծական բառի և ասացվածքի ու առածի տարրերությունները:

1. Եթե առածները, ինչպես նաև ասացվածքները նախադասություն են, ապա վերլուծական բառերը մեծ մասամբ նախադասության անդամ են կամ միակազմ նախադասությանը համարժեք կառուց, և նրանց իմաստը հաճախ հնարավոր է արտահայտել մեկ բառով, այսինքն՝ վերլուծական բառը կարող է ունենալ հոմանիշներ (բառով կամ դարձվածքով), իսկ առածների ու ասացվածքների բովանդակությունը, որպես կանոն, հնարավոր չէ արտահայտել մեկ բառով: Յենց այդ հատկանիշով էլ դրանք տարրերվում են վերլուծական բառերի մի ստվար զանգվածից:

2. Վերլուծական բառերը և ասացվածքներն ու առածները տարրերվում են նաև գործածության հաճախականությամբ. վերլուծական բառերը լայնորեն կիրառվում են գրավոր և բանավոր խոսքում, իսկ ասացվածքների և առածների գործածությունը դիպվածական է և կախում ունի տեքստից ու նրա ոճական ուղղվածությունից:

Անփոփելով ներկայացվածը՝ առաջարկում ենք վերլուծական բառի հետևյալ սահմանումը. «Վերլուծական բառը լիիհմաստ և սպասարկու բառերից կազմված կայուն լեզվական միավոր է, որը գործառական իմաստային առումով համարժեք է ամրողակազմ բառին»:

Աշխատանքի երկրորդ գլուխը վերնագրված է «Վերլուծական բայի բնորոշումն ու սահմանումը»:

Առաջին ենթագլուխը ներկայացնում է վերլուծական բային բնորոշ գծերը և մի շարք լեզվաբանների տեսակետները վերլուծական բայի վերաբերյալ:

Դայտնի է, որ բայը խոսքի մասերի համակարգում քերականական ամենահարուստ առանձնահատկություններով օժտված խոսքի մասն է և ամենակարևոր դերն է խաղում: Վերլուծական բառամիավորների մեջ ևս բայերը մեծ խումբ են կազմում:

Բնագիտացի ճանաչված ֆրանսագետ Մ. Գրեվիսը վերլուծական բայը սահմանում է որպես «բառերի միացություն, որն արտահայտում է մեկ հասկացություն և ստանձնում բայի դերը»<sup>11</sup>:

<sup>11</sup> Grevisse M. Le bon usage. 13<sup>e</sup> éd., Paris: Duculot, 1993, p. 239.

Վ. Ժիրմունսկին գտնում է, որ ֆրանսերենի վերլուծական բայերը կազմվում են կայուն կառուցյմերի միջոցով: Դրանք օժտված են կառուցվածքային և քերականական մի շարք հատկանիշներով<sup>12</sup>:

Ս. Գուխմանը վերլուծական բայերը դիտում է որպես «լիինաստ և սպասարկու բառերի կայուն կապակցություններ»<sup>13</sup>:

Ֆրանսերենում վերլուծական բայց, բնականաբար, ներառում է բայ, որին կարող է միանալ.

ա) առանց որոշակի գոյական (օրինակ՝ *avoir honte, donner raison, faire place, prendre part*),

բ) որոշակիչ+գոյական (օրինակ՝ *avoir l'air, avoir de la chatte, prendre le large*),

գ) բայ (օրինակ՝ *faire revenir, se faire rincer*),

դ) ածական+գոյական (օրինակ՝ *avoir la haute main, faire le long feu, faire la sourde oreille*),

ե) ածական, որը գործածվում է որպես մակրայ (օրինակ՝ *couper sec, faire cru, faire dur*):

Վերլուծական բայերը հաճախ ունեն համարժեք պարզ համադրական բայերը: Օրինակ՝

**faire carrière** – réussir

**prendre feu** – s'enflammer, և այլն:

Հաճախ համադրական և համարժեք վերլուծական բայն օգտագործվում են կողք կողք՝ կրկնությունից խուսափելու համար: Օրինակ՝

Le chef du syndicat **fit la grimace** en se frottant le genou.

Il **grimaca** en redoublant d'efforts pour reprendre la tête dans la chicane qui se profilait entre deux piles de containers. (Levy M. Sept jours pour une éternité... Paris: Robert Laffont, 2002, pp. 202-203)

Երկրորդ գլխի երկրորդ ներազլուխը նվիրված է վերլուծական բայերի իմաստաբանական դասակարգմանը: Ուսումնասիրելով ֆրանսերենի վերլուծական բայերը՝ դրանք բաժանել ենք հետևյալ իմաստաբանական խմբերի.

1. Զպատճառաբանված նշանակություն ունեցող վերլուծական բայեր, որոնց իմաստը չի բխում դրանց բաղադրիչների ընդհանուր

<sup>12</sup> Жирмунский В. Об аналитических конструкциях // Аналитические конструкции в языках различных типов. М.: Наука, 1965, р. 7.

<sup>13</sup> Гухман М. Глагольные аналитические конструкции как особый тип сочетаний частичного и полного слова // Вопросы грамматического строя. М.: Наука, 1955, с. 345.

իմաստից: Օրինակ՝ *tenir tête* վերլուծական բայթ, որը նշանակում է «ընդդիմանալ, հակառակել», չպատճառաբանված է, քանի որ դրա իմաստը իր բաղադրիչների իմաստի հանրագումարը չէ (*tenir – պահել, tête – գլուխ*):

2. Ոչ պատկերավոր պատճառաբանված նշանակություն ունեցող վերլուծական բայեր, որոնք, որպես կանոն, բաղկացած են մեկ լիիմաստ և մեկ սպասարկու բառից: Նմանատիպ վերլուծական բայերը հիմնականում կազմվում են *avoir, faire, mettre, prendre* և մի քանի այլ սպասարկու բայերի օգնությամբ: Օրինակ՝ *avoir sommeil, faire appel, mettre en doute, prendre fin* և այլն:

Այս վերլուծական բայերի տարրերակիչ հատկանիշներից մեկն էլ այն է, որ դրանց մեջամասնությունը հոմանիշային հարաբերության մեջ է մտնում համադրական կամ պարզ ձևերի հետ: Ընդ որում, վերլուծական բայի գոյականական բաղադրիչի և համադրական բայի հիմքը հիմնականում համընկնում են: Օրինակ՝ *faire mention – mentionner, prendre la fuite – fuir*, և այլն:

Կան նաև մի շարք վերլուծական բայեր, որոնք կազմված են երկու լիիմաստ բառից: Օրինակ՝ *accorder confiance, chercher aventure, demander pardon, donner asile, déposer plainte* և այլն:

3. Պատկերավոր պատճառաբանված նշանակություն ունեցող վերլուծական բայեր, որոնց իմաստակիր բաղադրիչն ունի ածանցյալ իմաստ (փոխսաբերական կամ փոխանվանական): Օրինակ՝ *donner leçon, faire frein, se mettre au plume, prendre racine* և այլն:

Այնուհետև առանձին ենթագլուխներով տրվում են լայնիմաստ *avoir, être, faire և mettre* վերլուծական բայերի ընդհանուր բնութագիրը և տարրերակիչ հատկանիշները:

Երկրորդ գլխի վերջին ենթագլուխը նվիրված է որոշակիչների ներին և նշանակությանը վերլուծական բայերի կազմում: Մենք ուսումնասիրել ենք առավել գործածական մոտ 200 վերլուծական բայ: Այնուհետև այդ բայերի գոյականական բաղադրիչից առաջ ավելացրել ենք տարրեր որոշակիչներ՝ դրված ինչպես եզակի, այնպես էլ հոգնակի թվով, ինչպես նաև անորոշ, որոշիչ հոդեր, ցուցական և ստացական ածականներ:

Լեզվանյութի քննության արդյունքում վերլուծական բայերը բաժանել ենք չորս հիմնական խմբի՝

1. Վերլուծական բայեր, որոնք ընդունում են ցանկացած որոշակիչ՝ առանց իմաստային էական փոփոխության,

**2.** Վերլուծական բայեր, որտեղ հնարավոր չէ ներմուծել որևէ որոշակիչ,

**3.** Վերլուծական բայեր, որտեղ որոշակչի ներմուծումը հանգեցնում է ինաստափոխության,

**4.** Վերլուծական բայեր, որոնք ընդունում են միայն մի քանի որոշակիչներ:

Ուսումնասիրել ենք նաև, թե արդյոք որոշակչի ընտրությունը կախված է բայից, թե՝ գոյականից:

Մեր կողմից ուսումնասիրված լեզվանյութը թույլ է տալիս փաստել, որ որոշակիչների ներմուծումը հիմնականում պայմանավորված է ոչ թե գոյականի, այլ բայի բնույթով: Յիշավի, *avoir, faire, prendre* և *donner* սպասարկու բայերով ամենաշատն են կազմվում վերլուծական բայեր, և դրանք հավասարապես գործածվում են վերը նշված խնդերում:

Ուսումնասիրելով վերլուծական բային բնորոշ հատկանիշներն ու առանձնահատկությունները՝ առաջարկում ենք վերլուծական բայի հետևյալ սահմանումը. «Վերլուծական բայը տարակազմ լեզվական միավոր է, որն արտահայտում է մեկ հասկացություն և ստանձնում բայի դերը՝ խոսքին հաղորդելով ինաստային ու ոճական մի շարք նրերանգներ, որոնցից գուրկ են համադրական բայերը»:

Ատենախսության երրորդ գլուխը վերնագրված է «Համադրական և վերլուծական բայերի գուգադրական վերլուծություն»: Այն բաղկացած է երկու ենթագլխից և նվիրված է համադրական և վերլուծական բայերի գուգադրական ուսումնասիրությանը, քանի որ հենց այդ ժամանակ է, որ ի հայտ են գալիս ինաստային, ոճական և քերականական (մասնավորապես կերպային) տարրերություններ:

Երրորդ գլխի առաջին ենթագլխում քննության են առնվում համադրական և վերլուծական բայերի ինաստառական առանձնահատկությունները:

Վերլուծական բայերը ֆրանսերենի բառապաշարի բաղկացուցիչ մասն են կազմում և լայնորեն նպաստում դրա հարստացմանը: Դրանք խոսքի միջոցով արտահայտվող պատկերները դարձնում են ավելի հստակ և խոսքին հաղորդում մի շարք նրերանգներ, որոնցից գուրկ են համադրական բայերը:

Արդի ֆրանսերենում կարելի է գտնել *s'enfuir* համադրական բայի և *prendre sa course, prendre la fuite /փախչել/* վերլուծական բայերի բազմաթիվ հիմանիշներ: *Décamper, détailler, filer, se sauver* պարզ բայերը պատկանում են խոսակցական լեզվին, մինչդեռ *se barrer, se cavaler, se*

*défiler, se tirer համադրական բայերը և s'attacher ou ramasser un bidon, faire cavale, se déguiser en cerf, (se) faire la malle (la valise), se faire la paire, ficher le camp, lever le pied ou lever, prendre la clef des champs, prendre ses cliques et ses claques, prendre ses jambes à son cou, jouer des flûtes ou des quilles, jouer rip, se tirer des flûtes բայական դարձվածքներն օգտագործվում են ժողովրդախոսակցական լեզվում:*

*Առօրյա խոսակցական լեզուն հարուստ է չափազանցական կայուն արտահայտություններով.*

**Avoir la bouche en feu** /քառացի՞ բերանը կրակի մեջ ունենալ/- համեմունքներից բերանը ճրմոալ

**Être cousu d'or** /քառացի՞ ուկով կարված լինել/- շատ հարուստ լինել, և այլն:

Մյուս կողմից, խոսակցական լեզուն հակված է մեղմացնելու խոսքը: Յաճախ քաղաքավարությունից, նորանկատությունից կամ այլ հանգամանքներից դրվագ որոշ բառեր փոխարինում են այլ բառով կամ պատկերավոր շրջասությամբ:

Այդ երևույթը, որը հայտնի է մեղմասություն անվամբ, հատուկ է խոսակցական լեզվին, լինի դա առօրյա խոսակցական թե նորմավորված: Որպես օրինակ կարող ենք նշել *être ivre վերլուծական բայի և s'enivrer /հարթե՞լ արթել, հարբած՝ արբած լինել/ համադրական բայի՞ խոսակցական լեզվում գործածվող շրջասությունները. avoir les bottes à bascule ու à rouleaux, avoir ou tenir une caisse, avoir son casque, avoir ou tenir une paille, avoir du vent dans les voiles, être casquette, être gris, être illuminé, être noir, être plein, être dans les vignes ու être dans les vignes du Seigneur, tenir une bonne cuite և այլն: Avoir son compte և en avoir une pochetée բայական դարձվածքները նշանակում են «ամբողջովին հարբած լինել», մինչդեռ avoir son pompon-ը՝ «թերթակի հարբած լինել»:*

Ամփոփելով կարող ենք նշել, որ վերլուծական բայերն օժտված են ոչ միայն իմաստային, այլև ոճական նորերանգներով: Դուզարտահայտչական երանգավորում ունեցող խոսակցական և ժողովրդախոսակցական բառերն ու դարձվածյային կապակցությունները, որոնք կազմում են խոսակցական լեզվի հիմնական բառապաշարը, կարող են հոնանիշային շարքեր կազմել ոճականորեն չնշույթավորված և լեզվի բոլոր ոճերում օժտագործվող բառերի և դարձվածյային կապակցությունների հետ: Դրանք հարստացնում են առօրյա խոսակցական լեզուն, այն դարձնում ավելի աշխալցի գունեղ:

Երրորդ գլխի երկրորդ ենթագլուխը նվիրված է համադրական և վերլուծական բայերի քերականական առանձնահատկություններին:

Վերլուծական բայերը բայական հարացույցի մասն են կազմում և կարող են հանդես գալ ֆրանսերենի բային բնորոշ բոլոր գործառույթներով: Վերլուծական բայերը, ինչպես համադրական բայերն ունեն դեմք, թվի, ժամանակի, եղանակի, սերի քերականական կարգերը:

Ֆրանսերենի կերպի քերականական կարգի մասին խոսելիս մի շարք լեզվաբաններ տարանջատում են բայերի երեք խումբ<sup>14</sup>.

1. Ավարտական բայեր (*verbes terminatifs*),

2. Տևական բայեր (*verbes duratifs*),

3. Բազմապատկական/կրկնողական բայեր (*verbes itératifs*):

Մենք բայերի այս խմբերին ավելացրել ենք չորրորդ խումբը՝ սկսողական բայերը (*verbes inchoatifs*) և դրանք ուսումնասիրել ենք առանձին-առանձին:

Ավարտական բայերը ենթադրում են գործողության բնական ավարտը: Նմանատիպ իմաստ կարող է արտահայտվել ինչպես համադրական՝ *tomber, pendre, trancher, trouver, mourir, déchirer, fermer, casser, apercevoir, ajouter*, այնպես էլ վերլուծական՝ *faire balle (banqueroute, cadeau, carrière, cas, date, demi-tour), remporter la victoire* բայերի միջոցով:

Տևական բայերը ցույց են տալիս այնպիսի գործողություն, որը շարունակական է, չի ավարտվում: Նմանատիպ գործողությունը կարող է ընդհատվել միայն արտաքին ազդեցության հետևանքով (օր.՝ *regarder, réfléchir, aller, sentir, entendre, écouter, savoir, posséder* և այլն): Բազմաթիվ վերլուծական բայեր ևս իրենց բարիմաստի շնորհիվ կարող են արտահայտել նմանատիպ հասկացություններ (օր.՝ *faire campagne, cercle, chemin, corps, (de la) peine, défaut* և այլն):

Բազմապատկական/կրկնողական բայերն արտահայտում են ակնքարթային գործողության կրկնությունը (օր.՝ *tailler, hacher, relire, criailleur, chantonner, voler* և այլն): Բազմապատկական կերպը կարող է արտահայտվել նաև որոշ վերլուծական բայերով (օր.՝ *faire chorus, avoir coutume de* և այլն):

Ֆրանսերենում բազմապատկական/կրկնողական կերպն (aspect itératif) արտահայտվում է *բայ+հոգմակի թվով* անորոշ հոդ+գոյական վերլուծական կառույցի միջոցով: Օր.՝ *faire des avances (des excuses, des façons, des misères, des ouvertures, des réserves* և այլն):

<sup>14</sup> Référovskaya E., Vassiliéva A. Essai de grammaire française. Cours théorique, Moscou, 1964, pp. 148-149.

Ֆրանսերենում սկսողական կերպն (aspect inchoatif) արտահայտվում է երկրորդ խմբի համադրական բայերի միջոցով (-ir): Օր.` *jaunir, rougir, vieillir* և այլն:

Սակայն հարկ ենք համարում նշել, որ այս կաղապարը կենսունակ չէ, այսինքն՝ արդի ֆրանսերենում նշված կաղապարով նոր բայեր չեն կազմվում: Ավելին, նույնիսկ այդ խմբի բայերը հաճախ չեն գործածվում:

Ֆրանսերենում բայի սկսողական կերպն արտահայտվում է նաև *prendre+գոյական և mettre+նախորդ+գոյական վերլուծական կառույցների միջոցով*: Օրինակ՝ *prendre position (goût, place, racine, conscience, du ventre, feu, forme, la mer, la fuite), mettre à pied (en cause, en danger)* և այլն:

Անփոփելով կարող ենք նշել, որ վերլուծական բայերն արտահայտում են գործողության ընթացք, որի առնչությունը վերջնակետին ավելի ցայտուն է, քան համադրական բայերի դեպքում: Ինչպես ցույց տվեցին ուսումնասիրությունները, վերլուծական կաղապարներն առավելապես գործածվում են այս կամ այն կերպային իմաստը հալորդելու համար:

Եզրակացության մեջ ամփոփվում են աշխատանքի հիմնական արդյունքները.

- Վերլուծական բառը շփման եզրեր ունի բառապաշարային հարակից միավորների հետ (դարձվածք, բարդ բառ, ազատ բառակապակցություն, ասացվածք, առած), սակայն ընդհանրություններ ունենալով հանդերձ նաև ունի ընդգծված տարրերակիչ հատկանիշներ:
- Վերլուծական բառը որոշակի կառուցվածքահմաստային կաղապար ունեցող տարրակազմ և կայուն լեզվական միավոր է, որն ընդգրկում է իմաստակիր և կիսասպասարկու բաղադրիչներ և գործառական-իմաստային առումով հանարժեք է ամբողջակազմ բառին:
- Ֆրանսերենի վերլուծական բայերի մեծամասնությունն ունի ոչ պատկերավոր պատճառաբանված նշանակություն: Նմանատիպ բայերը, որպես կանոն, բաղկացած են մեկ լիինաստ և մեկ սպասարկու բառից: Դրանք հիմնականում կազմվում են լայնիմաստ *avoir, faire, mettre, prendre* և մի քանի այլ սպասարկու բայերի օգնությամբ:

- Մեծ է որոշակիշների դերը վերլուծական բայերում: Կարող ենք փաստել, որ ցանկացած որոշակիչ ընդունող վերլուծական բայերում էական հմաստափոխություն տեղի չի ունենում, եթե ի սկզբանե գոյականն ունի թանձրացական իմաստ: Եվ հակառակը, միայն վերացական հմաստ ունեցող գոյականը, դառնալով վերլուծական բայի բաղադրիչ, չի ընդունում որևէ որոշակիչ:
- Վերլուծական բայը իմաստակիր լեզվական միավոր է, որն արտահայտում է մեկ հակացություն և ստանձնում բայի դերը՝ խոսքին հաղորդելով իմաստային ու ոճական մի շարք նրբերանգներ, որոնցից գորևէ են համադրական բայերը:
- Համադրական և վերլուծական բայերի գուգադրական հետազոտության ժամանակ է, որ ի հայտ են գալիս իմաստային, ոճական և քերականական (մասնավորապես կերպային) որոշակի տարրերություններ:
- Հոմանիշային շարքեր կազմում են ոչ միայն առանձին բառերը, այլև դարձվածային և վերլուծական կապակցությունները: Ընդ որում, ոճականորեն չեզոք բառերն ու կապակցությունները կարող են հիմնանիշային շարքեր կազմել ժողովորական կամ ժողովորախոսակցական լեզվին պատկանող բառամիավորների հետ:
- Ի տարրերություն համադրական բայերի, վերլուծական բայերը, հատկապես վերջիններիս մի քանի կաղապարները կանոնավոր ձևով արտահայտում են գործողության տարրանությ հատկանիշներ: Ավելին, կերպային որոշ իմաստներ արտահայտվում են միայն վերլուծական բայերով:
- Բառապաշարային վերլուծական (տարակազմ) միավորների մեջ հստակ ի հայտ է գալիս լեզվական նշանի անհանաչափությունը (ասիմետրիան). բառակապակցություն՝ ըստ կառուցվածքի, բառ՝ ըստ գործառությի:
- Ստուգաբանորեն հարակից, իսկ կառուցվածքով տարասեռ համադրական և վերլուծական բայերը կազմում են մեկ ընդհանուր հարացույց, որում պարզորոշ ուրվագծվում է դրանց փոխառնչությունների համակարգային բնույթը:

Նետազոտության հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. Բայական դարձվածի բնորոշումն ու սահմանումը (արդի ֆրանսերենի նյութի հիման վրա) // Օտար լեզուները Յայաստանում, գիտամեթոդական հանդես, հ. 1, Երևան, ԿԱԻ հրատ., 2012, էջ 11-23:
2. Արդի ֆրանսերենի համադրական և վերլուծական բառամիավորների ոճական միջ քանի առանձնահատկությունների մասին // Կանթեղ, գիտական հոդվածների ժողովածու, Երևան, Ասոդիկ 4(53), 2012, էջ 68-79:
3. À propos de quelques particularités sémantiques des verbes synthétiques et analytiques en français moderne // Actes du 3<sup>ième</sup> colloque international «Le Miroir linguistique de l'univers», Erevan: Lingua, 2012, pp. 71-77.
4. Դարձվածի և բառապաշտային հարակից միավորների հարաբերակցության խնդիրը (արդի ֆրանսերենի նյութի հիման վրա) // Օտար լեզուները Յայաստանում, գիտամեթոդական հանդես, հ. 1, Երևան, ԿԱԻ հրատ., 2013, էջ 14-31:

**АРУТЮНЯН ВАРДУШ НОРАЙРОВНА**

**СИСТЕМНОЕ СООТНОШЕНИЕ СИНТЕТИЧЕСКИХ И  
АНАЛИТИЧЕСКИХ ГЛАГОЛОВ В СОВРЕМЕННОМ ФРАНЦУЗСКОМ  
ЯЗЫКЕ**

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.02.08 «Романские языки».

Защита состоится 27 июня 2014 года, в 12:30 на заседании специализированного совета 009 ВАК РА, действующего в Ереванском государственном университете (Ереван, Алека Манукяна 1).

**РЕЗЮМЕ**

Данная диссертация посвящена исследованию аналитических глаголов французского языка в соотношении с синтетическими глаголами.

**Актуальность** темы диссертационной работы обусловлена необходимостью изучения аналитических глаголов параллельно с синтетическими, что позволяет выявить ряд семантических, стилистических и грамматических признаков данного класса глаголов в системе современного французского языка.

**Научная новизна** настоящей работы заключается в том, что впервые делается попытка объединить и проанализировать аналитические глаголы французского языка. Будучи важным компонентом любого речевого акта, данные глаголы не были исследованы в достаточной мере в рамках грамматики и лексикологии.

**Цель** работы - комплексно проанализировать аналитические глаголы французского языка, провести сопоставительное исследование синтетических и аналитических глаголов и выявить различия, существующие между ними.

В соответствии с поставленной целью нами были выдвинуты следующие **задачи**:

- определить предпосылки существования и распространения аналитических лексических единиц
- провести сопоставительное исследование аналитического слова и смежных лексических единиц
- выявить особенности аналитического глагола
- классифицировать аналитические глаголы французского языка по семантическим классам

- изучить аналитические глаголы, образованные при помощи семантически объемных служебных глаголов *avoir*, *être*, *faire*, *mettre*
- принять во внимание роль детерминантов в исследовании аналитических глаголов
- провести сопоставительное исследование синтетических и аналитических глаголов с целью выявления семантических, стилистических и грамматических отличий между ними.

**Теоретическая значимость** работы состоит в критическом исследовании работ отечественных и зарубежных лингвистов, в уточнении их позиций, а также в изложении собственной точки зрения. **Практическая значимость** состоит в комплексном исследовании аналитических глаголов французского языка в сопоставлении с синтетическими глаголами, обобщении полученных результатов, которые могут найти применение в рамках лекционных и практических курсов по лексикологии и грамматике, а также быть использованы при составлении новых картотек и словарей французского языка.

Диссертационная работа состоит из введения, трех глав, заключения и списков научной и художественной литературы, словарей, периодической печати и интернет источников, а также приложения.

В **первой главе** проводится анализ аналитического слова и смежных лексических единиц (фразеологизмы, сложные слова, свободные словосочетания, пословицы и поговорки). В результате исследования выявляются сходства и различия, существующие между ними. На основе этих результатов нами дается определение аналитического слова.

В **второй главе** работы представлены особенности аналитических глаголов, а также дается семантическая классификация данных глаголов. Далее в отдельных параграфах исследуются аналитические глаголы, образованные при помощи служебных слов *avoir*, *être*, *faire*, *mettre*. Последний параграф посвящен определению роли детерминантов в исследовании аналитических глаголов.

**Третья глава** посвящена сопоставительному исследованию синтетических и аналитических глаголов, позволяющему выявить семантические, стилистические, а также грамматические, в частности, аспектуальные отличия исследуемых глагольных конструкций.

**В заключении** обобщаются результаты исследования.

VARDUSH HARUTYUNYAN

THE SYSTEMIC CORRELATIONS OF SYNTHETICAL AND  
ANALYTICAL VERBS IN MODERN FRENCH

SUMMARY

The **subject matter** of the present paper is the study of the analytical verbs of the Modern French language and their correlations with synthetical verbs.

The **relevance** of this research emerges from the necessity of comparing analytical verbs with the synthetical ones particularly, because it is during, and from subsequent result of this comparison, that a number of semantic, stylistic and grammatical peculiarities come into existence.

The **scientific novelty** of this research is to embrace and to explore the analytical verbs of the Modern French language. These verbs, which play an important role during the verbal communication have not been explored until now under the light of modern lexicology and grammar.

The **aim** of the research is to make a detailed analysis of the French analytical verbs, to compare synthetical verbs with analytical ones in order to reveal their differences.

To attain this aim, we have set out the following **objectives**:

- To reveal the preconditions of the existence and diffusion of the analytical units;
- To compare analytical word with the adjacent lexical units;
- To bring out the nature and the peculiarities of analytical verbs;
- To divide French analytical verbs into semantic groups;
- To study the analytical verbs formed by the polysemantic auxiliary verbs *avoir, être, faire, mettre*;
- To discuss the role of determinants in the analytical verbs;
- To compare synthetical verbs with analytical ones in order to reveal their semantic, stylistic and grammatical peculiarities.

The **theoretical value** of this research is in the examination and analysis of Armenian and foreign scholarly works; the specification of the advanced problems and the exposition of own points of view.

The **practical value** of this research is in the thorough analysis of French analytical verbs, the comparison with synthetical verbs and the summary of the obtained results which can hold a firm place in the course of lexicology and

grammar, as well as in the development and creation of new French dictionaries and glossaries.

The present work has the following **structure**: introduction, three chapters, conclusion, bibliography of scientific, artistic and press resources, dictionaries and websites, as well as annex.

The **first chapter** analyses the analytical word and the adjacent lexical units (idiom, compound word, free word-combination, proverb and saying). The results show their similarities and differences, and our definition of analytical word is given.

The **second chapter** shows the distinguishing features of analytical verbs and gives their semantic distribution. Then, the analytical verbs formed by auxiliary verbs *avoir*, *être*, *faire*, *mettre* are explored in the separate subsections. The last subheading discusses the role of determinants and their significance in the analytical verbs.

The **third chapter** of this research makes the comparative analysis of synthetical and analytical verbs, because it is during this process that a number of semantic, stylistic and grammatical (particularly aspectual) differences appear.

The **conclusion** presents the main findings of the research.

A handwritten signature in black ink, appearing to read "B. Belykh".